

# **ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ**

## **ԱՇԽԱՏԱՆՔ**

**Թեմա՝** Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում:

**Հաստատություն՝** թիվ 97 մսուր-մանապարտեզ ՀՈԱԿ

**Դաստիարակ՝** Աննա Քերոբյան

**Ղեկավար՝** Ժաննա Ավետիսյան

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն—	3
Նախադպրոցականների ստեղծագործական կարողությունների բացահայտում—4-5	
Մատնանկարչությունը որպես նկարչության ոչ ավանդական մեթոդ —6-13	
Պարապմունքի պլան ——————	13
Եզրակացություն—	14-15
Գրականության ցանկ—	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթադպաստիարակչական գործընթացի ամբողջական համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրին եւ կենցաղի գեղագիտական կողմերին:

Այս հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է ուղղված երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում եւ արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների, շրջապա- տող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձեւավորմանը



Նկարչությունը նախադպրոցական տարիքի երեխայի համար շրջապա- տող աշխարհի մասին իր ընկալումները պատկերավոր արտահայտման լավագույն ձեւն է Այս գործընթացի զարգացմանն ու բացահայտմանը նպաստում է նաև ոչ ավանդական նկարչության մեթոդիկան:

Օգտագործելով ոչ ավանդական նկարչության տարբեր ձևեր ու մեթոդներ, ինչպես նաև գույների ստացման եղանակներ երեխայի մեջ ձեռավորվում է հետաքրքրասիրություն կերպարվեստի ցանկացած ձեւի նկատմամբ:

## **Նախադպրոցականների ստեղծագործական կարողությունների բացահայտում**

Նախադպրոցականների ստեղծագործական կարողությունների բացահայտման, ձևավորման և զարգացման առանձնահատկությունները միշտ եղել են մանկավարժության և հոգեբանության ուշադրության կենտրոնում:

Դաստիարակը իր աշխատանքային գործունեության ընթացքում միշտ պետք է աջակցի երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու բացահայտմանը: Ճիշտ չէ նախադպրոցականին սովորեցնել ստեղծագործական գործողություն, քանի որ դա յուրաքանչյուրի մոտ յուրովի է ձևավորվում վառ երևակայության շնորհիվ:

Այս գործնթացի զարգացմանն ու բացահայտմանը նպաստում է նաև ոչ ավանդական նկարչության մեթոդիկան:

Աշխատանքի փորձը վկայում է, որոշ սովորական նյութերով և յուրօրինակ տեխնիկական միջոցներով նկարչությունը թույլ է տալիս երեխաներին՝ վերապրել անմոռանալի դրական զգացումներ: Կարելի է ըստ զգացմունքների դատողություններ անել այն մասին, թեինչն է տվյալ պահին ուրախացնում, հետաքրքրում, դրդում հուսահատության, հուզում երեխային: Դրանցով են բնրոշվում նրա ներաշխարհը, բնավորությունն ու անհատականությունը:

Մեզ՝ մեծահասակներիս, անհրաժեշտէ երեխայի մեջ զարգացնել գեղեցիկիզացողությանը:

Վաղ նախադպրոցական տարիքից կերպարվեստի նկատմամբ սեր ներարկելու, հետաքրքրություն արթնացնելու նպատակով ես կիրառում եմ պատկերավորման ոչ ավանդական միջոցներ: Նկարչության արտասովոր միջոցները շատ են գրավում երեխաներին, և պատկերավոր ասած, խմբում բռնկվում է ստեղծագործական մի իրական հեքիաթ:

Սովորելով պատկերել սեփական զգացմունքները թղթի վրա՝ երեխան սկսում է ավելի լավ հասկանալ մյուսների զգացմունքները: Նա սովորում է հաղթահարել վեհերոտությունը, նկարչության հանդեպ այն վախը, թե ոչինչ չի ստացվի:

Համոզվում է, որ կստացվի եւ գեղեցիկ կստացվի:

Երեխաները սիրում են նկարել նաև օճառի պղպջակներով: Դրա համար անհրաժեշտ են փրփրածառ, գուաշ, ջուր, թուղթ եւ կոկտեյլի ձողիկ: Գուաշով սրվակի մեջ լցնում ենք փրփրածառը, ավելացնում մի փոքր ջուր, լավ խառնում և ձողիկով փշում մինչեւ փրփուրի առաջանալը: Մնում է փրփուրին կպցնել թու թը եւ նկարել մի քանի մանրամասներ:

Ըսդհանրապես նկարել կարելի է ամենուրեք եւ ամեն ինչով՝ ատամի խո-  
գանակով, ձեռքերով, մատներով: Գործի պետք է դնել մեր երևակայությունը: Այդ  
դեպքում մեզ կայցելի ստեղծագործության, զարմանքի և միասնության հրձվանքը:  
Ոչ ավանդական մեթոդներով երեխաները սիրու են նկարել նաև աղով: Այն օժտված է  
հետաքրքիր դեկորատիվ հնարավորություններով:



Թղթի վրա նախապես պետք է ուրվանկարել: Այնուհետեւ վրձնի  
օգնությամբ անհրաժեշտ է այն թրջել, աղ ցանել եւ սպասել մինչ կներծծվի ջուրը:  
Հետո պետք է ավելորդ աղը վրայից թափ տալ: Եթք ամբողջը չորանա, հարկավոր  
է նկարել բաց թողնված մասերը եւ գունավորել.

## ՍԱՏՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸՌՊԵՍ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԹՈԴ

Կերպարվեստի պարապմունքներն ունեն ճանաչողական եւ ուսուցողական նշանակություն: Պարապմունքների կազմակերպումը հնարավորություն է տալիս երեխաներին՝ ծանոթանալու պարզագույն նյութերի տեսակներին եւ դրանց հատկություններին: Դաստիարակը պետք է բացատրի եւ ցուցադրի ուսուցանվող նյութը, հետեւի, որ երեխաները լսեն ու ձիշտ կատարեն հրահանգները:

Կերպարվեստային գործունեության ընթացքում զարգանում են երեխայի ստեղծագործական, կառուցողական, գեղագիտական ունակությունները, ինչպես նաև լուծվում են հետեւյալ կարեւորագույն խնդիրները:

- ✓ Երեխաները սովորում են զգալ, տեսնել, դիտել շրջապատող աշխարհը:
- ✓ Հարստանում է զգայական փորձը, տեսողական, լսողական, հոտի, շոշափելիքի զգացողությունը:
- ✓ Կարողանում են առարկաները տեսնել և բնութագրել ըստ գույնի, ձեւի, չափի և տարածության մեջ:
- ✓ Սովորում են նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ. ծանոթանում են լայնություն, բարձյաւթյուն, մեծություն հասկացություններին:
- ✓ Զարգանում է առարկաները եւ երեւույթները տեսնելու, դիտելու, համեմատություններ եւ վերլուծություններ կատարելու, դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:
- ✓ Հարստանում է երեխայի ստեղծագործական երեւակայությունը, հղկվում է գեղագիտական ձաշակը:

Հիմնական գուներանգները՝ կարմիրը, կապույտը, դեղինը, կանաչը և այլն, երեխան աստիճանաբար տարբերում է բնության հետ առնչվելիս:

Սկզբնական շրջանում փոքրիկները հմտանում են ձեռքի, մատների տարբեր դիրքերով հարվածների կատարման մեջ, ինչպես նաև չափերի,

տեսակների ու ձեւերի տարբերակման մեջ: Դրանք հետագայում կծառայեն որպես նկարի պարզագույն տարրեր: Նրանց կարելի է առաջարկել նկարել ծաղիկ, ցողուն, մեծ եւ փոքր աղեղիկներ, տանել ուղիղ ու ալիքաձեւ գծեր, կորագծեր: Այդ գործողությունները կնպաստեն ձեռքերի համաշափ շարժումների զարգացմանը:

Ձեւերի եւ միջոցների բազմազանությունը նոր խնդիր է առաջ բերում եւ ստիպում փոքրիկներին անընդհատ ինչ-որ բան հորինել: Փորձելով սեփական զգացմունքները պատկերել թղթի վրա' երեխան սկսում է ավելի լավ հասկանալ մյուսների զգացմունքները: Նա սովորում է հաղթահարել վեհերոտությունը, նկարչության հանդեպ այն վախը, թե ոչինչ չի ստացվի: Ընդհակառակը, համոզվում է, որ կստացվի եւ գեղեցիկ կատացվի:



Նկարչության բնագավառում առաջին քայլերը պետք է սկսել պարզ ձեւերի պատկերմամբ: Հաջորդաբար կարելի է անցնել ավելի բարդ ձեւերի՝ կիրառելով ավանդական եւ ոչ ավանդական մեթոդներ:

Սպիտակ թղթի վրա գունաներկված ձեռքերի, մատների, ափի միջոցով կատարվող նկարչությունն ընդունված է անվանել մատնանկարչություն:

Նկարչության ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը: Երեխան կարող է նկարել աջ կամ ձախ ձեռքով, երկու ձեռքով, ձեռքի ափերով, մատներով: Աշխատաձեւի այս տեսակի նպատակն է՝ զարգացնել հետաքրքրասիրություն մատիկների եւ ներկերի միջոցով ստեղծվող պատկերների նկատմամբ:

Չեռքերով, մատիկներով, ափի միջոցով նկարելը կարելի է համարել նկարչության այլնտրանքային ձեւերից մեկը, որի շնորհիվ կարելի է յուրովի վերարտադրել առարկաների, երեւույթների պատկերները՝ գործի դնելով վառ երևակայությունը:



Նկարչության այս մեթոդը կարելի է սկսել 2-3 տարեկանից: Սկզբում երեխան պետք է աշխատի վառ գույներով: Դա օգնում է նրան ուշադիր լինել շրջապատում գտնվող վառ, ուրախ, տաք գույներով առարկաների նկատմամբ:

Ինչպես նաև սկզբում աշխատում են գունավորված մատիկներով, որից հետո, հետզա պարապմունքների ընթացքում երեխաները ինքնուրույն են ընտրում գույները և զարգացնում են իրենց վառ երևակայությունը:

Մենք՝ դաստիարակներս, պետք է երեխաներին ցույց տանք ներկից օգտվելու ճիշտ ձևը, բացատրենք, որ պետք է ներկը վերցնել քիչ քանակությար և զգուշությամբ դնել թղթի վրա:

Երեխան կարող է աշխատել ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով: Այս դեպքում դաստիարակը չպետք է միջամտի, այլ միայն ուղղորդելու է: Աշխատելու ընթացքում նա ճանաչում է գույները եւ իր համար բացահայտում դրանցով ստացվող նոր գուներանգները: Գործողությունների այս ձեւը թույլ է տալիս՝

- ✓ արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ:
- ✓ զարգացնել ձեռքի մանր մկանները,
- ✓ հղկել ձեռքի շարժումները:

Երեխաները կարող են նկարել աջից ձախ, վերևից ներքև, կենտրոնից եզր, գծային և գունային խզբանքներ անել, տանել ուղիղ գծեր: Հնարավոր է, որ լավ չներկեն, բաց թողնեն անկյունները, գծերը լինեն միայն ուղղահայաց կամ հորիզանական: Միևնույն է աշխատելու ընթացքում երեխաներն ունենում են դրական հույզեր:



Երեխաները աշխատանքի ընթացքում կարող են պատկերել քամի, անձրև, ծաղիկներ, գծեր, տարբեր նախշեր և այլն: Մատնանկարչության աշխատանքի նպատակն է ակտիվացնել երեխայի շոշափելիքի զգայարանը, հայտնաբերել և ստանալ նոր գույներ, զարգացնել հաղորդակցվելու ունակությունը:

Ոչ ավանդական նկարչությունը ինքնարտահայտվելու, ինքն իր հետ շփման միջոց է, հիանալի գործիք ոչ միայն տրամադրությունը բարձրացնելու, այլև աշխարհին այլ աչքերով նայելու, քո մեջ նոր հնարավորություններ բացահայտելու համար:

Մատներով նկարչությունը կամ գունազարդումը շատ հետաքրքիր և օգտակար զբաղմունք է: Նկարչության այս տեսակը լավագույն տարբերակներից է երեխայի մանր մոտորիկան զարգացնելու և գունային գամաները ուսումնասիրելու համար: Բացի այդ երեխան ստանում է դրական զգացմունքներ, զարգացնում է տեսողական և շոշափելիքի զգայարանները:

Այլընտրանքային նկարչությունը արդիական է բոլոր ժամանակներում. այն չունի սահմաններ ու արգելքներ:



Մանկական նկարներում յուրահատուկ կերպով արտացոլվում է երեխայի հոգեբանական զարգացումը: Մանկական նկարները երկար ժամանակ հետաքրքրում են հոգեբաններին, քանի որ դրանք հանդիսանում են երեխայի հոգ երանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց: Այն վերլուծման է ենթարկվում

Մանկական նկարի զարգացման շատ հետազոտողներ ընդգծում են դրա փուլային զարգացումը: Յուրաքանչյուր փուլում նկարն ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր տարիքին համապատասխանում են շրջապատի, աշխարհի սեփական բացահայտումները, և դրանք արտահայտվում են նկարներում:

Ոչ ավանդական նկարչության այս մեթոդ՝ մատնանկարչությունը զարգացնում է նաև մանր մոտորիկան:

Մանկական նկարի զարգացման շատ հետազոտողներ ընդգծում են դրա փուլային զարգացումը: Յուրաքանչյուր փուլում նկարն ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր տարիքին համապատասխանում են շրջապատի, աշխարհի սեփական բացահայտումները, և դրանք արտահայտվում են նկարներում:

Գործողությունների այս ձևը թույլ է տալիս՝

- արթնացնել երեխայի հետաքրքրությունը ստեղծվող պատկերների նկատմամբ,
- զարգացնել ձեռքերի մանր մկանները,

- հղկել ձեռքերի շարժումները:

Այս գործողության նկատմամբ երեխաների անկեղծ ոգևորությունը և ակտի վությունը բացատրվում է այն հանգամանքով, որ փոքրիկը շարժողական ակտիվության մեջ պահանջ ունի: Այդ պատճառով էլ նա նկարում է հարվածներով, թոփշքներով:



Գոյություն ունի մոտորիկայի երկու տեսակ՝ մանր և խոշոր:  
Այս երկու մոտորիկաներիվաղ զարգացումը կարևոր է երեխայի ընդհանուր գ արգացման գործընթացում: Մոտորիկայի հետ արկավոր է լուծել ժամանակին, քանի որ բացթողումները կարող են առաջացնել լուրջ խնդիրներ:

Նկարչության միջոցով, ակտիվացնելով երեխաների մատների աշխատանքը՝ խթանում ենք մանր մոտորիկայի զարգացումը  
և նպաստում ուղեղի ընդհանուր հասունությանը:

Մարդու ուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոռորդինացնող կենտրոններզտնվում են հարևանությամբ: Բոլոր շարժումները դեկավարող կենտրոնի 1/3 –ը զբաղեցնում է ձեռքի մատների շարժումների կենտրոնը:

Գիտության կողմից հաստատված այս փաստը թույլ է տալիս ձեռքի դաստակը դիտարկելու որպես «խոսքի օրգան», որի մարզումն ու վարժեցումը նույնքան կարևոր դեր է խաղում երեխայի խոսքի զարգացման գործընթացում, որքան հնչարտաբերական ապարատը:

Երեխայի մատների ծայրերին գտնվող նյարդային վերջավորությունները, նյարդային ազդակներ են հաղորդում գլխուղեղին: Այդ ազդակները, մասնավորապես ձևվորում են երեխայի բանավոր խոսքը: Ահա, թե ինչու է այդքան կարևոր մանր մոտորիկայի զարգացմանը նպաստել վաղ տարիք ից:



Իդեալ, ուղեղում գտնվող խոսքի և մոտորիկայի զարգացման համար պատասխանատու կենտրոնները շատ մոտ են գտնվում իրար: Մատիկները, որոնց միջոցով հիմնականում զարգանում և ամրապնդվում է մոտորիկան, իրենց շարժունակությամբ խթանում են նաև մտածողության զարգացմանը: Ինչի համար անհրաժեշտ է կատարել մատների վարժություններ, շատ նկարել հատկապես նպաստել, որ երեխաները մատնանկարչություն անեն:

Մանկավարժությանը հայտնի է, որ ուսուցման գործընթացում նյութի ակտ իվ յուրացումը և մտապահումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ուսուցման գործընթացում զուգորդվում են մի քանի զգայարանների վերլուծիչներ՝ լսողական, տեսողական, շարժողական: Այդ գործընթացում զգացումը, պատկերացումը, միտքը, հանդես գալով միաժամանակ՝ ուսուցանվող նյութի յուրացումը դարձնում են զգայական, լսելի, տեսանելի,

շարժողական, որոնք միասնության մեջ նպաստում են երեխաների ընդունակութունների և հմտությունների համալիր զարգացմանը:

## Պարապմունքի պլան

**Թեմա՝ "Բազմագույն գծեր"**

**Տեսակ՝ Մատնանկարչություն**

**Տարիք՝ 34 տ.**

**Նպատակ՝** զարգացնել և ակտիվացնել շոշափելիքի զգայարանը, սովորեցնել նոր գույների ստացման գաղտնիքը, զարգացնել մանր մոտորիկան և հաղորդակցվելու ունակությունը:

**Անհրաժեշտ նյութեր՝** սպիտակ թուղթ, գոգնոց, գուաշ, թաց անձեռոցիկ կամ լաթ:

**Ընթացք՝** երեխաներին բացատրել մատներով նկարելու ընթացքում կատարվող գործողությունները: Մասնավորապես ուղիղ գծեր ստանալու համար մատները թաթախել գուաշի մեջ և թղթի վրա տանել գծեր՝ տարբեր ուղղություններով, անձրևի տեսքով, հորիզոնական, ուղղահայաց և այլն: Երեխաներին պետք է բացատրել, որ գույներից օգտվեն հերթականությամբ, որպեսզի տեսնեն ու նկատեն նոր ստացվող երանգները:

Գույների ստացման այս մեթոդը թույլ կտա երեխաներին հաղորդակցվել միմիանց հետ և կիսվել իրենց փորձով:

**Ամփոփում՝** պարապմունքի վերջում, երեխաներին տալ իրենց կատարած աշխատանքի շուրջ հարցեր.

- Ի՞նչ սովորեցին մատնանկարչության ընթացքում
- Ինչպե՞ս ստացան նոր գույներ
- Ի՞նչ պատկերեցին թղթի վրա

## Եզրակացություն

Ինձ համար այլընտրանքային նկարչությունը անականկալներով լի մի հիանալի աշխարհ է, որտեղ խոսում են ձեռքերը, և ձեռքերի միջոցով արտահայտվում է ներքին ասելիքը, հոգևիճակն ու տրամադրությունը:

Որպես ամփոփում, կարելի է ասել, որ այլընտրանքային նկարչությունը, հնարավորություն է տալիս երեխային խաղաղվել, հանգստացնել ներքին բացասական հույզերը, չարտահայտված տագնապները, օգնում է հաղթահարել բարդույթները, վախերն ու սթրեսները:Քանի որ այլընտրանքային նկարչության ընթացքում երեխաների մոտ այնքան դրական հույզեր, էներգիա, հիացմունք, հրձ վանք ու բարձր տրամադրություն է տիրում, որ անհետանում են վերը թվարկված բացասական կողմերը:

Հետևելով երեխաների ոգևորված աշխատանքին, նկատում ենք, որ այլընտրանքային նկարչությունը օգնում է արտահայտել այն մտքերը ու ապրումները, որոնք դժվար է ձևակերպել բառերով, այսինքն՝ երեխաների համար այն ինքնահաստատման միջոց է, որը երեխային թույլ է տալիս լինել ազատ, ինքնուրույն, ազատվել ներքին զգացմունքներից և ակտիվացնել երևակայությունն ու հիշողությունը:Արդյունքում նկարչությունը երեխային ստեղծագործ է դարձնում՝ նպաստելով գեղեցիկը զգալու, տեսնելու, ընկալելու, ըմբռնելու և դրանով հիանալու կարողությունը:

Ինչպես նաև, նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի տեսողական, շարժողական, կոռորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության, մտավոր ունակությունների, նյարդային համակարգի ճիշտ զարգացման գործում, քանի որ նկարելու ընթացքում աշխատում են երեխայի տեսողական, շարժողական, մկանային, շոշափողական վերլուծիչներ:

Ուսումնասիրելով մատնանկարչությունը՝ որպես ոչ ավանդական նկարչության միջոց, երբ երեխաները իրենց մատիկներով ստանում են գեղեցիկ պատկերներ, տեսնում ենք, որ դրանով հղկվում է նրանց ձեռքի շարժումները, զարգանում է մանր մոտորիկան: Իսկ զարգացնելով երեխայի մանր մոտորիկան՝ մենք ակտիվացնում ենք նրա ուղեղի աշխատանքը, խթանում նրա խոսքի, մտածողության, տրամաբանության զարգացմանը: Այստեղից հետևություն, նկարչության միջոցով զարգացնելով մանր մոտորիկան, նպաստում ենք երեխայի խոսքի զարգացմանը:

Ուսումնասիրելով թեմային առնչվող մասնագիտական գրականությունը, ինչպես նաև դիտարկելով երեխաների հետ տարված գործնական աշխատանքներն ու փորձարկումները, հանգում ենք այն եզրկացության, որ այլընտրանքային նկարչությունը բոլոր առումներով նպաստում է.

- երեխայի նկարչական ունակությունների և կարողությունների ձեվավորմանը,
- գունածանաշությանը,
- երևակայության զարգացմանը,
- մտածողության զարգացմանը,
- մոտորիկայի զարգացմանը,
- խոսքի զարգացմանը:

## **Օգտագործված գրականություն**

- «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես
- Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ.